



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածը լրացնել 8-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«8. Զրպարտության և (կամ) վիրավորանքի վերաբերյալ գործերը:»:

Հոդված 2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը լրացնել 27.2 գլխով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Զրպարտության և (կամ) վիրավորանքի վերաբերյալ գործերով վարույթը

Հոդված 234.5. Զրպարտության և (կամ) վիրավորանքի գործերի քննության առանձնահատկությունները

1. Զրպարտության և (կամ) վիրավորանքի վերաբերյալ վեճեր քննելիս գործի քննությունն իրականացվում է սույն օրենսգրքով նախատեսված կանոնների պահպանմամբ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված առանձնահատկությունները:

2. Զրպարտության և (կամ) վիրավորանքի վերաբերյալ վեճեր քննելիս գործի քննությունն իրականացվում է սույն օրենսգրքի 139-րդ հոդվածով սահմանված կարգով հայցադիմումի պատասխան ներկայացնելու ժամկետի ավարտից հետո երեք ամսվա ընթացքում:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:»:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Նախագծով առաջարկվում է վիրավորանքի և(կամ) զրպարտության գործերը սահմանել որպես հատուկ հայցային վարույթի կարգով քննվող գործեր և նախատեսել նշված գործերի դատական քննության ողջամիտ ժամկետ, այն է՝ պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխան ներկայացնելու



**Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության
քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին**

երկշաբաթյա ժամկետի ավարտից հետո եռամսյա ժամկետը: Նշված ժամանակահատվածը լիովին համապատասխանում է ողջամտության պահանջներին, այդ թվում հաշվի է առնված դատարանների ընդհանուր ծանրաբեռնվածության փաստը և միևնույն ժամանակ հնարավորություն է տրվում իրականացնել սեղմ ժամկետում դատական քննություն: Ընդ որում, նշված ժամկետը նախանշում է դատական գործի առավելագույն ժամկետային սահմանները, և նախագծով առաջարկվում է դատարանի համար սահմանել պարտականություն հնարավորության պարագայում գործը քննել ավելի կարճ ժամկետում:

Սույն օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այլոց պատիվն ու արժանապատվությունն արատավորող հրապարակային արտահայտությունների և գործողությունների ենթադրյալ կատարման վերաբերյալ վեճերով գործերի քննության կառուցակարգերի արդյունավետության բարձրացման և այդպիսով զրպարտության և (կամ) «զոհերի» իրավունքների առավելագույն պաշտպանության անհրաժեշտությամբ:

Իրավական պետության անքակտելի հատկանիշներից մեկն արտահայտման ազատության և անձի պատվի և արժանապատվության պաշտպանության միջև ողջամիտ հավասարակշռություն ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունն է: Սույն համատեքստում կարևոր է, որպեսզի արտահայտման ազատության իրավունքի ենթադրյալ չարաշահման՝ վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ գործերի դատական քննությունն իրականացվի առավել սեղմ և ողջամիտ ժամկետում:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ առաջարկվող օրենսդրական փոփոխության նպատակն է սահմանել զրպարտության և վիրավորանքի վերաբերյալ վեճերով գործերի դատական քննության առավելագույն ողջամիտ ժամկետ:

ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զրպարտության և վիրավորանքի վերաբերյալ գործերի դատական քննությունը, ինչպես և բազմաթիվ այլ բնույթի գործեր, շատ հաճախ դատարանների կողմից քննության են առնվում ողջամտության չափանիշներին հակասող երկար ժամկետներում: Հարկ է նկատի ունենալ, որ վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ վեճերն ունեն այն առանձնահատկությունը, որ անձի պատվին և արժանապատվությանը հասցված ենթադրյալ վնասն ունի առավելապես բարոյական բնույթ, որի վերականգնումը ենթադրում է հնարավորին սեղմ ժամկետներ, իսկ գործի երկար քննությունը ավելի կխորացնի տուժողին հասցվող վնասը:



**Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության
քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին**

Մասնավորապես, գործի առանձնահատկություններից ելնելով՝ հայցվորի կողմից կարող է պահանջվել որոշակի նյութի կամ հայտարարության հեռացում տեղեկատվական աղբյուրից, հերքման հրապարակում և այլն: Որքան երկար է տևում վիրավորանքի և զրպարտության գործերի քննությունն, այդքան երկար է ենթադրյալ վիրավորական և զրպարտիչ նյութը շարունակվում մնալ հրապարակված և անպատասխան (առանց հերքման), ինչի արդյունքում հանրության առավել լայն զանգված է դառնում այդ նյութին իրազեկ, իսկ գործով հայցվորի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը շարունակաբար, այսպես ասած, վիրավորվում և/կամ զրպարտվում է, ինչը կարող է հանգեցնել զրպարտության և (կամ) վիրավորանքի «զոհերի» պատվի, արժանապատվության և գործարար համբավի վերականգնման դժվարությանը:

Գործի երկար քննությունը բացասաբար կազդի նաև ապացուցողական բազայի կազմի վրա, քանզի ապացույցները ժամանակի ընթացքում կարող են կորսվել, վնասվել և այլն, այդ թվում պատասխանող կողմի՝ ենթադրյալ վիրավորողի և (կամ) զրպարտողի գործողությունների կամ անգործության հետևանքով: Արդյունքում խախտվում է անձի արդար դատաքննության իրավունքը, ինչպես նաև նվազում է նշված գործերի դատական քննության՝ որպես իրավունքի պաշտպանության կառուցակարգի արդյունավետությունը:

ՏԵՂԵԿԱՆՔ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐԲՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ,
ԳՈՐԾՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ նոր իրավական ակտերի ընդունման, գործող իրավական ակտերում լրացումներ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:



*Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության
քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին*

ՏԵՂԵԿԱՆՔ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐՃԱՏՄԱՆ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ նախատեսվում է Հայաստանի Հանրապետության եկամուտների կրճատում, սակայն ծախսերի ավելացում չի նախատեսվում: